

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ՝ Յու. Մանվելյանի, ավագանու անդամների և համայնքի բնակիչների

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտի գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», Հայաստանի Հանրապետության օրենքով, համայնքի ավագանու անդամների, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում հետևյալ գործունեությունը. ըստ բնագավառների

1.ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒՔՅԵԿՏՆՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, սահմանված կարգով. քննության են առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվել է համապատասխան միջոցառումները.
- Քաղաքացիներին տրվել է տարբեր բնույթի 1634 տեղեկանքներ.

2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- 2013 թվականի սեփական եկամուտների հավաքագրումը կազմում է՝ 110.3%:

3. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- կազմակերպվել է համայնքի աղբահանությունը.
- Վերանորոգվել է գյուղապետարանի տանիքը:

4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Աջակցություն է ցուցաբերվել գորակոչին, գորակոչվել է հայկական բանակ 38 գորակոչիկ:
- Միջոցներ է ձեռնարկվել գոհված ազատամարտիկների ընտանիքների և պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը:

5. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը:

6. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Հսկողություն է իրականացվել առևտրի, հանրային սննդի ծառայությունների ոլորտում:

- Տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն:
- Տրվել է համայնքի տարածքում տեխնիկական հեղուկների և հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:

7. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքային ենթակայության մանկապարտեզների, մշակույթի տան, գրադարանի գործունեությունը:
- Համայնքում գործում է երկու միջնակարգ դպրոց:
- Համայնքում գործում է հոգևոր դպրոց, որտեղ դասերից դուրս ուսուցանում են հոգևոր դաստիարակություն, գործում է տարբեր խմբակներ:
- Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ (ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ 24.04, հաղթանակի և խաղաղության օր՝ 09.05, Հանրապետության տոն 28.05, Երեխաների իրավունքների պաշտպանության օր՝ 01.06, Անկախության օր՝ 21.09, Ամանոր 26.12):

8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱԻՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքային ենթակայության առողջապահական և մարզական հիմնարկների գործունեությունը:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Համայնքի տարածքում կազմակերպվել է սոցիալական օգնության ծառայության գործունեությունը:


10. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումները:
- Աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար:
- Համայնքի տարածքում շահագործվում է Յհակակարկտային կայան:

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՆԵՐԻՐՆԵՐԸ

- Գյուղապետարանի շենքի վերանորոգում.
- Խմելաջրի բացակայություն.
- Ծանապարհների ասֆալտապատում.
- Փողոցների լուսավորում.
- Հակակարկտային կայանների տեղադրում:
- Բնակֆոնդի բարելավում.

ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա ՀԱՐԹԵՆՅԱՆ

2014թվական հունվարի 24

գ. Քարակերտ